



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ.՝ (0236) 43040, 40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 20-Ա

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
21-Ի ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝ Մասիս քաղաքային համայնքի
ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Մասիս քաղաքային համայնքի
ավագանու 2020 թվականի փետրվարի 21-ի նիստի օրակարգը

1. ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N19-
Ա ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԻՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՑ ՄԻՆԶԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ը ԸՆԿԱԾ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԶԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԲԱԾԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ „ՄԱՔՈՒՐ
ՄԱՍԻՍ” ՓԲԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՎԵՐԱԲԱԾԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

6. „ՄԱՍԻՍԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՅՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՅ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԳԵՐԵԶԱՆԱՏԵՂԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎՃԱՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 02-Ի N05 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7., ՄԱՔՈՒՐ ՄԱՍԻՍ,, ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

8.ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ,,ՄԱՍԻՍԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ,, ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ,,ՍԻՍ,, ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

10.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,14351 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

12.ՕՐԻՆԱԿԱՆ ԾԱՆԱԶՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ,ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՍԱՐԳԻՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

14.ԵՓՐԵՄ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԶԲԱՂԵՅՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

15.ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16.ԳԱՌՆԻԿ,ՎՈՒՄ,ՎՐՈՒՅՐ ԳԵՎՈՐԳՅԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՕՍԿԻԱԴ ԹԵՐԺԱՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

17.ԷԴՈՒԱՐԴ ԱՃԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹԻ ԶԲԱՂԵՅՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

18.ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19.ԱՌԱՆՑ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՅՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱՐՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ.՝ (0236) 43040, 40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 21-Ա

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N19-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով,, Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի
Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջով **Մասիս
քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. Մասիս քաղաքային համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 24-ի N19-Ա
որոշմանը կից հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածը կցվում է/:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար

ՌԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



Հավելված

Մասիս քաղաքային համայնքի ավագանու
2020թ. փետրվարի 21-ի N 21-Ա որոշման

**<<ՄԱՍԻՍԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ>>
ՀՈԱԿ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱԾԽԱՏՈՂՆԵՐԻ ԶԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՔԱՉԱՓԵՐԸ**

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԾԽԱՏՈՂՆԵՐ			
h/h	պաշտոնի անվանում	հաստիքային միավոր	դրույքաչափ /ՀՀ դրամ/
1	Տնօրեն	1	250000
2	Տնօրենի տեղակալ	1	225000
3	Գլխավոր հաշվապահ	1	220000
4	Կադրերի գծով տեսուչ	1	150000
5	Օպերատոր	1	92620
6	Հաշվապահ	1	110000
7	Գործավար	1	92620
ՄՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
բնակչության հատուկ սպասարկում			
1	Գերեզմանափոր բանվոր	2	130000
2	Գերեզմանի հսկիչ	2	92620

Աշխատանքային ռեժիմը՝ շաբաթական 40 ժամյա, 5 աշխատանքային օր
Աշխատողների բանակը՝ 11

ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳՈՒՄԸ

Կ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԱՎՄԱՐԵՏ

Ս. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ.՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 22-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՌԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, „Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի „բ,, կետի, 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը և ֆինանսական բաժնի պետի զեկույցը (զեկույցը կցվում է) **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. Համայնքի 2020թ. բյուջեի վարչական մասի ծախսերը վերաբաշխել համաձայն հավելված 1-ի:
2. Համայնքի 2020թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը վերաբաշխել համաձայն հավելված 2-ի:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Handwritten signatures in blue ink.

Համայնքի ղեկավար



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

2020թ. Բյուջեի վարչական մասում „Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում ՀՈԱԿ-ին գերեզմանների սպասարկման համար ընդհանուր բնույթի այլ ծառայություններով նախատեսված միջոցները անհրաժեշտ է նվազեցնել 18361.8 հազար դրամով և ուղղել սուբսիդիայի հատկացմանը՝ 9810.4 հազար դրամ, աղբահանության և սան մաքրման ծախսերին՝ 8551.4 հազար դրամ:

Քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի համար նախատեսված ծախսերը՝ 7000.0 հազար դրամ սուբսիդիայի հոդվածից տեղափոխել այլ կոմունալ ծառայություններ հոդված:

Քաղաքապետարանում դեռատիզացիա և դեզինֆեկցիա կատարելու համար „Մասիսի կանխարգելիչ ախտահանում դուստր,, ՓԲԸ-ն դիմել է ծառայության տարեկան վճարը ավելացնելու խնդրանքով, նկատի ունենալով նյութերի գների բարձրացումը : Առաջարկվում է բյուջեում դեռատիզացիայի համար նախատեսված ծախսերը ավելացնել 100.0 հազար դրամով:

Մասիսի թիվ 3 մանկապարտեզին անհրաժեշտ է հատկացնել 700.0 հազար դրամ մանկական սեղաններ և աթոռներ ձեռք բերելու համար: Նկատի ունենալով, որ մանկապարտեզում առկա գույքը գտնվում է վատ վիճակում և նշված գումարով հնարավոր է թարմացնել 2 խմբասենյակի մանկական սեղաններն ու աթոռները, առաջարկվում է մանկապարտեզին հատկացնել 700.0 հազար դրամ լրացուցիչ սուբսիդիա:

„Մասիսի Մշակույթի կենտրոն,, ՓԲԸ-ին անհրաժեշտ է հատկացնել 647.0 հազար դրամ սուբսիդիա աշխատողների հունվար և փետրվար ամիսների աշխատավարձը վճարելու նպատակով:

Վարչական բյուջեում անհրաժեշտ լրացուցիչ ծախսերը կատարելու նպատակով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդը նվազեցնել 1447.0 հազար դրամով և ուղղել նշված ծախսերին:

2020թ. Բյուջեի ֆոնդային մասում անհրաժեշտ է նախատեսել 800.0 հազար դրամ Մասիս քաղաքի ավագ դպրոցին հարակից ֆուտբոլի դաշտի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ ձեռք բերելու համար: Առաջարկվում է այդ նպատակի համար անհրաժեշտ միջոցները հատկացնել ընդհանուր բնույթի այլ ծառայությունների վարչական սարքավորումներ հոդվածից:

Աշխատակազմի քարտուղար

Ֆինանսական բաժնի պետ



Վ. Գաբրիելյան


Ն. Սահակյան

Մասիս քաղաքային համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական
մասի ծախսերի վերաբաշխումը

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառնական դասակարգում, նպատակ	հոդված	Ծախսեր Գումարի չափը /հազար դրամ/
1	11	1	2	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը նվազեցնել	4891	-1447,0
2	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային այլ ծառայություններ. "Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում" ՀՈԱԿ-ի ընդհանուր բնույթի ծառայությունների գումարը նվազեցնել	4239	-18361,8
3				"Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում" ՀՈԱԿ-ին հատկացնել սուբսիդիա	4511	9810,4
4	05	1	1	Աղբահանություն. Աղբահանության և սան մաքրման ծախսերն ավելացնել	4213	8551,4
5	05	6	1	Շրջակա միջավայրի պահպանություն. Կանաչապատ տարածքների խնամքի համար նախատեսված սուբսիդիայի գումարը նվազեցնել	4511	-7000,0
6				Կանաչապատ տարածքների խնամքի համար հատկացնել այլ կոմունալ ծառայությունների գումար	4213	7000,0
7	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ. Դեռատիզացիայի ծախսերն ավելացնել	4213	100,0
8	09	1	1	Նախադպրոցական կրթություն. Թիվ 3 մանկապարտեզին հատկացնել լրացուցիչ սուբսիդիա	4511	700,0
9	08	2	3	Մշակույթի տներ. Մշակույթի տանը հատկացնել սուբսիդիա	4511	647,0
				Ընդամենը		0,0

Աշխատակազմի քարտուղար՝

Ֆինանսական բաժնի անդամ՝



(Handwritten signatures in blue ink)

Վ. Գաբրիելյան

Ն.Սահակյան

Մասիս քաղաքային համայնքի 2020 թվականի բյուջեի ֆոնդային մասի ծախսերի
վերաբաշխումը

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառնական դասակարգում, նպատակ	հոդված	Գումարի չափը /հազար դրամ/
1	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային այլ ծառայություններ. Վարչական սարքավորումների գումարը նվազեցնել	5122	-800,0
2	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ. 5- րդ ավագ դպրոցին հարակից ֆուտբոլի դաշտի հիմնանորոգման նախագծա- նախահաշվային աշխատանքներ	5134	800,0
				Ընդամենը		0,0

Աշխատակազմի քարտուղար

Ֆինանսական բաժնի պետ



Գ. Գաբրիելյան

Ն.Սահակյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ.՝ (0236) 43040, 40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 23-Ա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2019
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
18-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ „ՄԱՔՈՒՐ ՄԱՍԻՍ” ՓԲԸ-ԻՆ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՎԵՐԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին, Հայաստանի
Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք
ընդունելով ֆինանսական բաժնի պետի զեկույցը (զեկույցը կցվում է) **Մասիս
քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել 2019 թվականի դեկտեմբերի 5-ից մինչև 2020 թվականի փետրվարի
18-ը ընկած ժամանակահատվածում ձեռք բերված հիմնական միջոցների հաշվառումը
և բաշխումը գույքային հաշվառման փաստաթղթերում՝ համաձայն հավելված 1-ի:

2. „Մաքուր Մասիս, ՓԲԸ-ին պատկանող հիմնական միջոցները հաշվեկշռից-
հաշվեկշռի անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հատկացնել „Մասիսի
կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում,
ՀՈԱԿ-ին համաձայն հավելված 2-ի:

3. Ձեռք բերված և վերաբաշխված հիմնական միջոցները արտացոլել օգտագործողի
հաշվեկշռում:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՇԱՀԿԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

[Handwritten signatures in blue ink]

Համայնքի ղեկավար



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ձեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2019 թ. դեկտեմբերից մինչև 2020 թվականի փետրվարի 18-ը ձեռք բերված հիմնական միջոցների հաշվառման, վերաբաշխման և „Մաքուր Մասիս“, ՓԲԸ-ին պատկանող հիմնական միջոցները „Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում“, ՀՈԱԿ-ին հատկացնելու վերաբերյալ

2019 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2020 թ. փետրվարի 18-ը ընկած ժամանակահատվածում համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների հաշվին ձեռք է բերվել ընդհանուր 15 477 600 դրամի չափով հիմնական միջոցներ, նույն թվում աղբամաններ 65 հատ 10725000 դրամ արժեքով, LED լուսատուներ 111 հատ 3840600 դրամ արժեքով և հակահրդեհային վահանակներ 12 հատ 912000 դրամ արժեքով:

Ձեռք բերված հիմնական միջոցները հաշվառվել է գույքի հաշվառման մատյաններում, ներառվել է հաշվապահական հաշվեկշռում որպես հիմնական միջոց:

Ստացված հիմնական միջոցներից անհրաժեշտ է 12 հատ հակահրդեհային վահանակները հատկացնել համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին և քաղաքապետարանին յուրաքանչյուրին մեկական հատ՝ սեփականության իրավունքով:

LED լուսատուները՝ 111 հատ հատկացնել արտաքին լուսավորման ցանցի սպասարկումն իրականացնող օպերատորին առկա ցանցի ԴՆԱՏ լամպերը փոխարինելու նպատակով:

Ձեռք բերված 65 հատ աղբամանները անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հատկացնել „Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում“, ՀՈԱԿ-ին:

„Մաքուր Մասիս“, ՓԲԸ-ն պատկանող հիմնական միջոցները /ցանկը կից հավելվածում/ հաշվեկշից-հաշվեկշիռ հատկացնել „Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում“, ՀՈԱԿ-ին անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով:

Աշխատակազմի քարտուղար

Ֆինանսական բաժնի պետ



Վ. Գաբրիելյան

Ն. Սահակյան

**Մասիսի քաղաքային համայնքի կողմից 2019 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2020 թ. փետրվարի 18-ի
ժամանակահատվածում ձեռք բերված հիմնական միջոցների**

h/h	Անվանումը	Քանակ /հատ/	Գին /դրամ/	Գումար /դրամ/	Ձեռք բերման ամսաթիվը	ՈՒՄ Է հատկացվել
1	Աղբամաններ	65	165000	10725000	24.12.2019թ.	“Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում” ՀՈԱԿ-ին անժամկետ, անհատույց օգտագործման հռաժիշկով
2	LED լուսատուներ	111	34600	3840600	12/12/2019թ.	Հատկացնել արտաքին լուսավորման ցանցի սպասարկումն իրականացնող օպերատորին առկա ցանցի ԴԱՍՏ լամպերը փոխարինելու նպատակով
3	Հակահրդեհային վահանակներ	12	76000	912000	14.02.2020թ.	Մասիսի քաղաքապետարանի աշխատակազմ ՀԿՀ-ին և Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին սեփականության իրավունքով /ցանկը կցվում է/
	Ընդամենը			15477600		

Աշխատակազմի բաղադրար

Ֆինանսական բաժնի պետ



Վ. Գաբրիելյան

Ն. Սահակյան

Հավելված 2

Համայնքի ավագանու

21.02.2020թ. թիվ 23-Ա որոշման

«Մաքուր Մասիս» ՓԲԸ-ին պատկանող հիմնական միջոցները հատկացնել «Մասիս կոմունալ տնտեսություն, բարեկարգում եւ բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ին անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով

Չափի միավորը՝ դրամ

Հ/Հ	Անվանումը	Քանակ /հատ/	հաշվեկշ ռային արժեք	Կուտակվ ած մաշվածու թյուն	Մնացորդա յին հաշվեկշռ ային ամօժեք	Ձեռք բերման տարեթիվ
1	Համակարգիչ INTEL G 1840 4GB RAM/HDD 500GB/LG 20	1	205000	205000	0	17.01.2017թ.
2	Համակարգչային ՀԾ ծրագիր	1	220000	220000	0	17.01.2017թ.
3	Պրինտեր CANON	1	65000	65000	0	17.01.2017թ.
4	Աղբատար ավտոմեքենա ԶԻԼ 430362	1	13311618	13311618	0	01.07.2008թ.
5	Գրասեղան	1	220000	130817	89183	11.01.2017թ.
6	Աղբարկղ 0,65մ խոր	35	2628780	1182950	1445830	15.09.2015թ.
7	Աղբարկղ 0,6-1,1մ խոր	230	4257000	2274110	1982890	01.07.2017թ.
8	Կոմպրեսատոր փչող	1	150000	67750	82250	28.09.2017թ.
9	փողեկուկ մեքենա Road	1	299000	119760	179240	31.12.2017թ.
	Ընդամենը		21356398	17577005	3779393	

Աշխատակազմի բարձրագույն

Ֆինանսական բաժնի անդ



Վ. Գաբրիելյան

Ն. Սահակյան

ՑԱՆԿ

Մասիսի քաղաքապետարանի կողմից ձեռք բերված հակահրդեհային վահանակների բաշխման

Հ/Հ	Ստացող կազմակերպությունը	Քանակ	Գին	Գումար	ձեռք բերման ամսաթիվը
1	Մասիսի քաղաքապետարան ՀԿՀ	1	76000	76000	14.02.2020թ.
2	Մասիսի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ	1	76000	76000	14.02.2020թ.
3	Մասիսի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ	1	76000	76000	14.02.2020թ.
4	Մասիսի թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ	1	76000	76000	14.02.2020թ.
5	Մասիսի թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ	1	76000	76000	14.02.2020թ.
6	Մասիսի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ	1	76000	76000	14.02.2020թ.
7	Մասիսի թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ	1	76000	76000	14.02.2020թ.
8	Արմեն Նազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ	1	76000	76000	14.02.2020թ.
9	Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ՀՈԱԿ	1	76000	76000	14.02.2020թ.
10	Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց ՀՈԱԿ	1	76000	76000	14.02.2020թ.
11	Գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ	1	76000	76000	14.02.2020թ.
12	Քաղաքային կենտրոնական գրադարան ՀՈԱԿ	1	76000	76000	14.02.2020թ.
	Ընդամենը	12	912000	912000	

Աշխատակազմի քարտուղար

Ֆինանսական բաժնի պետ



Վ. Գաբրիելյան

Ն. Սահակյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ.՝ (0236) 43040, 40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մասիս համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ) /կցվում է/:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՇԱՀԿԵՐԴՅԱՆ ԱՔՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

[Handwritten signature]

Համայնքի ղեկավար՝



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքի 2020 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանը
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2020թ. փետրվարի 21-ի թիվ 2-րդ
նիստի թիվ 24-Ա որոշմամբ

ՄԱՍԻՍ 2020թ.

Բովանդակություն

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները	4
2. Համայնքի 2020 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)	8
3. Համայնքային գույքի կառավարման 2020թ. ծրագիրը	28
4. Համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը	33
5. Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը	37

Ներածություն

Տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) տեղական ժողովրդավարության զարգացման, ՏԻ-անը բնակիչների մասնակցության, համայնքի ծրագրային և ֆինանսական կառավարման, ինչպես նաև համայնքն արտաքին աշխարհին ներկայացնելու հանրային կառավարման ստորին՝ համայնքային մակարդակում գործող հիմնական ծրագրային փաստաթուղթ է: Այն համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար նախատեսված ներդրումային (մարդկային, ֆինանսական, վարչական, սոցիալական, գույքային և տեխնիկական) ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, որտեղ արտացոլված նպատակների, խնդիրների, մուտքային և ելքային ստույգ հաշվարկների ու արդյունքային ցուցանիշների, ինչպես նաև մոնիթորինգի և գնահատման համակարգի թելադրանքով ճշգրտվում և պլանավորվում են վերոնշյալ ռեսուրսները:¹ Այն նաև թույլ է տալիս հիմնավորված, փաստարկված (արդյունքային ցուցանիշների միջոցով) կերպով գնահատել համայնքի և համայնքում գործող այլ կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի արդյունավետությունը մեկ տարվա ընթացքում՝ հիմք ստեղծելով Մասիս համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ճշգրտման և հաջորդ տարիների պլանավորման և բյուջետավարման համար:

Մասիս քաղաքային համայնքի 2020թ. ՏԱՊ-ի մշակման հիմնական նպատակներն են՝

- Համակարգել համայնքում տվյալ տարվա անելիքները, այդ թվում՝ սահմանելու համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայություններն ու առաջնահերթությունները, հաշվառելու և գնահատելու համայնքի ներքին ռեսուրսները, համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, դրանց հիման վրա հաշվարկելու համայնքի համախառն ռեսուրսները և բացահայտելու ծախսերի կատարման պակասուրդը (դեֆիցիտը),
- սահմանել ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված ծրագրերի և միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման ռազմավարությունը, նախանշելու այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են համայնքում լրացուցիչ միջոցներ ներգրավելու համար՝ համագործակցելով պետական, միջազգային, հանրային և մասնավոր գործընկերների հետ,
- համախմբել համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները Համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (այսուհետ՝ ՀՀԶԾ) սահմանված՝ համայնքի տեսլականի և ոլորտային հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շաղկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները,
- մշակել և օգտագործել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

1 «Մերօղական ուղեցույց համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման», ԳՄՀՀ, ՀՖՄ, 2017

Մասիս քաղաքային համայնքի 2020թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.

1-ին բաժնում սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

2-րդ բաժնում ներկայացվում է համայնքի 2020 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

3-րդ բաժնում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2020 թվականի ծրագիրը:

4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Մասիսը բարեկարգ, մաքուր, լուսավոր համայնք է, որն ունի բնակչության համար բավարար կենսապայմաններ և աչքի է ընկնում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման բարձր որակով:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	17	12
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	42.2	45
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	21965	22100

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Ապահովել թափանցիկ, արդյունավետ և բնակչությանը որակյալ հանրային ծառայություններ մատուցող տեղական ինքնակառավարման իրականացում	Համայնքի բնակիչների բավարարվածությունը համայնքապետարանի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, %	87	97
	Համայնքապետարանի գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը, %	60	70

	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	42.2	45
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
2020 թվականին պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
Մանկապարտեզներում և այլ ենթակա հաստատություններում ազդարարման համակարգերի տեղադրում	-	-	-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը	Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, %	40	60
Ոլորտ 5. Հողօգտագործում			
2020 թվականին հողօգտագործման բնագավառում նախատեսվում է ոռոգման ներտնտեսային 2.8 կմ ցանցի արդիականացում	Առկա է 48 կմ ոռոգման ցանց, որից 2,8 կմ կարդիականացվի	-	-
Ոլորտ 6. Տրանսպորտ			
Բարելավել ներհամայնքային ճանապարհների անցանելիության մակարդակը և ապահովել ճանապարհների մշտական անցանելիությունն ու տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը	Բարեկարգ ներհամայնքային ճանապարհների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, %	47	49
	Հետիոտների և վարորդների բավարարվածության աստիճանը ներհամայնքային ճանապարհների վիճակից, %	50	60
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
2020 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-	-
Ոլորտ 8. Կրթություն			

Ապահովել համայնքում կրթական ծառայությունների արդյունավետ մատուցումը	Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, %	4	5
	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, %	80	85
	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	85	90
	Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %	11	12
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
Ապահովել տեղական ինքնակառավարման մարմնի կողմից համայնքի բնակչությանը մշակույթի և երիտասարդության հետ տարվող որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	70	75
	Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճը, %	1	2
	Համայնքում մշակութային հիմնարկ հաճախող երեխաների տեսակարար կշիռն դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ, %	35	40
Ոլորտ 10. Առողջապահություն			
2020 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել	-	-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			

Բարելավել համայնքի մարզական կյանքը և ապահովել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում որակյալ ծառայությունների մատուցում	Համայնքի բնակիչների համար սպորտի ծառայությունների հասանելիությունը, %	85	90
	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող սպորտի ծառայությունից, %	40	45
	Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը համապատասխան տարիքի երեխաների թվի կազմում, %	80	85
Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն			
Օգնել համայնքի կարիքավոր, վիրավոր և զոհված ազատամարտիկների ընտանիքներին՝ բարելավելու նրանց սոցիալական վիճակը	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից, %	80	85
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
Ապահովել համայնքում գյուղատնտեսության բնագավառում որակյալ մասնագիտական ծառայությունների մատուցումը և նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը	Գյուղատնտեսության բնագավառում զբաղված բնակիչների տեսակարար կշիռն ընդհանուր բնակչության կազմում,%	18	22
Ոլորտ 14.Անասնաբուժություն և բուսասանիտարիա			
2020 թվականին անասնաբուժության ոլորտում կազմակերպվել են հակահամաճարակային միջոցառումներ		42	50
Ոլորտ 15.Շրջակա միջավայրի պահպանություն			
Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումը և չեզոքացումը, ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ	Աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ ծառայությունների մատուցումից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացում,%	20	25
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
2020 թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:		-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
2020 թվականին նախատեսվող համայնքային հարցերին ուղղված քննարկումները կլինեն բաց, ուղիղ հեռարձակմամբ կազմակերպված՝		-	-

քաղաքացիների տեղեկացվածության նպատակով:			
---	--	--	--

2. Համայնքի 2020 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում	380931.6	ընդհանուր համայնքային
Ընդամենը		380931.6	-
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
1.	2020 թվականին պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
1.	Հակահրդեհային վահանակների և կրակմարիչների ձեռք բերում և տեղադրում	913,0	912,0
Ընդամենը		913,0	-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Մասիս բնակավայրի բազմաբնակարան շենքերի տանիքների, կառույցների ընթացիկ նորոգում և բակային տարածքներում ցայտաղբյուրների պահպանում, շենքերի բակերում ապօրինի շին. ապամոնտաժում	6000,0	ընդհանուր համայնքային
2.	Մասիս բնակավայրի բակային տարածքներում հանգստի տաղավարների և խաղահրապարակի կառուցման, մինի ֆուտբոլի դաշտի կառուցման, այգու հիմնանորոգման նախահաշիվներ	810,0	ընդհանուր համայնքային
3.	Մասիս բնակավայրի շենքերի, շինությունների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ընթացիկ նորոգում և հիմնանորոգում	5150,0	ընդհանուր համայնքային
4.	Մասիս բնակավայրի շենքերի բակերի բարեկարգման, տանիքների հիմնանորոգման նախահաշիվների պատվիրում	290,0	
5.	5-6-7-րդ թաղամասերում գազաֆիկացման աշխատանքներ, գրադարանի գազատարի իրականացում	23171.1	
6.	Փողոցային լուսավորության իրականացում, փողոցների լուսավորության էլ էներգիայի ծախս, փողոցների լուսավորության համակարգի սպասարկում, փողոցների լուսավորության ցանցի ընդլայնման համար նախահաշիվի ձեռք բերում	22216,1	ընդհանուր համայնքային
Ընդամենը		57637.2	
Ոլորտ 5. Հողօգտագործում			

	2020 թվականին հողօգտագործման բնագավառում նախատեսվում է ոռոգման ներտնտեսային 2.8 կմ ցանցի արդիականացում	88000.0	-
Ոլորտ 6. Տրանսպորտ			
	Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում, խճապատում, հարթեցում, ավտոճանապարհային նշանների տեղադրման և գծանշման նախագիծ	8410,0	ընդհանուր համայնքային
Ընդամենը		8410,0	-
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
	2020 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 8. Կրթություն			
1.	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար գույքի ձեռք բերում	12070.0	
2.	Նախադպրոցական և արտադպրոցական կրթության կազմակերպում	365208,8	ընդհանուր համայնքային
3.	Նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի, սյունների հիմնանորոգում և նախահաշիվների պատվիրում	23300.16	ընդհանուր համայնքային
Ընդամենը		400578.96	-
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
1.	Մշակութային և հոգևոր կյանքի բարելավում	20967.6	ընդհանուր համայնքային
Ընդամենը		20967.6	-
Ոլորտ 10. Առողջապահություն			
	2020 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ընդամենը		-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
1.	Համայնքում մարզական կյանքի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում, մարզահագուստ, պատվոգրեր սպորտի բնագավառի համար	1000,0	ընդհանուր համայնքային
Ընդամենը		1000,0	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
1.	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին, սոցիալապես խոցելի խավի աշակերտների համար դասագրքերի համար այլ նպաստ, նվիրատվություն հասարակական կրոնական կազմակերպություններին (Սուրբ Թադեոս Եկեղեցի)	14920,0	ընդհանուր համայնքային
Ընդամենը		14920,0	-
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
1.	Ոռոգման համակարգի բարելավման համար կապիտալ դրամաշնորհ		
2.	Գյուղատնտեսական մասնագիտական ծառայությունների մատուցում	250,0	ընդհանուր համայնքային
Ընդամենը		250.0	-
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			

1.	2020 թվականին անասնաբուժության ոլորտում իրականացվելու են խոշոր պլանի պատվաստումներ		ընդհանուր համայնքային
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Աղբահանության անդորրագրերի ձեռք բերում	200.0	
2.	Համայնքի տարածքում աղբահանության, սանիտարական մաքրման և կանաչապատ տարածքների խնամման և կատաղած շների դեմ պայքարի աշխատանքների իրականացում	83609.5	ընդհանուր համայնքային
Ընդամենը		83809.5	-
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
1.	2020 թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
1.	2020 թվականին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ոլորտում հանրային քննարկումների, լսումների կազմակերպում	-	-
Ընդհանուրը		973767.86	-

Աղյուսակ 4. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
Ոլորտային նպատակ Ապահովել թափանցիկ, արդյունավետ և բնակչությանը որակյալ հանրային ծառայություններ մատուցող տեղական ինքնակառավարման իրականացում		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը համայնքապետարանի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, 97% ✓ Համայնքապետարանի գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը, 70% ✓ Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, 45%			
Ծրագիր 1. Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում					
Ծրագրի նպատակ Բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը՝ լավ	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2020թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Համայնքի աշխատակազմի աշխատողների թիվը, 50 2. Աշխատակիցների գործունեության արդյունավետության բարձրացում, 10% 3. Համայնքի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, 248 օր 4. Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայությունը՝ այո 5. Համայնքապետարանի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2020թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայություն

	ստացվող դիմում-բողոքների թվի նվազում, 7%				
	6. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը, 90%				
	7.Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, 3 օր				
Միջոցառումներ 1. Աշխատակազմի բնականոն գործունեության ապահովում 2. Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ 3. Համակարգչային ծառայությունների ձեռք բերում 4. Մասնագիտական ծառայությունների ձեռք բերում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված պահպանման ծախսեր՝ 139054,2 հազ. դրամ 2. Համայնքի աշխատակազմի աշխատակիցների թիվը՝ 60 3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1 4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք 5. Աշխատակազմում առկա համակարգչային սարքերի և սարքավորումների թիվը 122 6. Համայնքի պաշտոնական համացանցային կայք http://www.masiscity.am/			
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում					
2020 թվականին պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:					
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում					
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ոլորտային նպատակ Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, 60%			
Ծրագիր 1. Մասիս բնակավայրի բազմաբնակարան շենքերի տանիքների ընթացիկ նորոգում և բակային տարածքներում ցայտաղբյուրների պահպանում					
Ծրագրի նպատակ Մասիս բնակավայրում ունենալ վերանորոգված տանիքներով բազմաբնակարան շենքեր,	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ ✓ Նորոգված տանիք ունեցող բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, 1%	Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2020թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական

ցայտադրություններով ապահովված բակային տարածքներ	✓ Բակերի առկա ցայտադրությունների քանակը՝ 23	ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ			ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Մեծացել է բնակավայրի գրավչությունը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Բազմաբնակարան շենքերի վերանորոգված տանիքների ընդհանուր մակերեսը՝ 170 քմ ✓ Բնակիչների բավարարվածությունը բնակարանային շինարարության ոլորտում մատուցվող ծառայություններից, 80% ✓ Շինարարական աշխատանքների իրականացման ժամկետը, 1 տարի	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ		2020թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ 1. Մասիս բնակավայրի բազմաբնակարան շենքերի տանիքների ընթացիկ նորոգում, բակային տարածքներում ցայտադրությունների պահպանում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝11000,0 հազար դրամ ✓ Վերանորոգման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը 25			
Ծրագիր 2. Մասիս բնակավայրի բակային տարածքներում հանգստի տաղավարի կառուցում և խաղահրապարակների ստեղծում					
Ծրագրի նպատակ Մասիս բնակավայրի բակային տարածքներում բնակչության հանգստի և երեխաների ժամանցի ապահովման պայմանների ստեղծում	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Բակերի հագեցվածությունը հանգստի տաղավարներով և խաղահրապարակներով, 20%	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավարի տեղակալ	2020թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք Մեծացել է բնակավայրի գրավչությունը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Բնակիչների բավարարվածությունը հանգստի և երեխաների ազատ ժամանակի անցկացման համար ստեղծված պայմաններից, 80% ✓ Կառուցված հանգստի տաղավարների քանակը՝ 1 ✓ Ձեռք բերված խաղային սարքավորումների քանակը՝ 2	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն

Միջոցառումներ ✓ Մասիս բնակավայրի բակային տարածքներում հանգստի տաղավարների կառուցում և խաղահրապարակների ստեղծում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 2810,0 հազար դրամ ✓ Վերանորոգման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը՝ 20			
Ծրագիր 3. Մասիս բնակավայրի շենքերի, շինությունների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ընթացիկ նորոգում և հիմնանորոգում					
Ծրագրի նպատակ Մասիս բնակավայրի բնակիչների առողջության և սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման ապահովում	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ ✓ Բնակիչների բավարարվածությունը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վիճակից՝ լավ	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2020թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Մեծացել է բնակավայրի գրավչությունը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Բազմաբնակարան շենքերի ընթացիկ նորոգված կոյուղագծի երկարությունը՝ 100 գ/մ ✓ Շենքերի, շինությունների հիմնանորոգված կոյուղագծերի ընդհանուր երկարությունը՝ 170 գ/մ ✓ Շենքերի, շինությունների հիմնանորոգված խմելու ջրագծերի ընդհանուր երկարությունը՝ 170գ/մ ✓ Բնակիչների բավարարվածությունը ջրամատակարարման ոլորտում մատուցվող ծառայություններից, 60% ✓ Շինարարական աշխատանքների իրականացման ժամկետը, 1 տարի	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ		2020թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ Մասիս բնակավայրի շենքերի, շինությունների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ընթացիկ նորոգում և հիմնանորոգում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 150,0 հազար դրամ ✓ Վերանորոգման աշխատանքներում ներգրավված աշխատողների թիվը՝ 20			
Ծրագիր 4. Փողոցային լուսավորության իրականացում					

Ծրագրի նպատակ Բարձրացնել Մասիս համայնքի փողոցների երթևեկության անվտանգության մակարդակը և դրանք դարձնել հարմարավետ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ ✓ Փողոցների երթևեկության անվտանգության մակարդակը տրանսպորտային միջոցների և հետիոտների համար՝ բավարար	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ,	Համայնքի ղեկավար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2020թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Մասիս համայնքի փողոցները դարձել են հարմարավետ և անվտանգ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Փողոցների իրականացված արտաքին լուսավորության համակարգի երկարությունը, 17,5 կմ ✓ Իրականացված գիշերային լուսավորության համակարգի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ 52% ✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը 4 ժամ ✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ձմռանը 6 ժամ ✓ Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից, 65%	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել
Միջոցառումներ ✓ Մասիս բնակավայրի լուսավորության համակարգի սպասարկում ✓ Մասիս բնակավայրի գիշերային լուսավորվածությամբ չապահովված փողոցներում և շենքերի բակերում գիշերային լուսավորության անցկացում (լեդ համակարգերով), փողոցների լուսավորության համակարգի կառուցում			Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) ✓ Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ՝ 22216,1 հազ. դրամ ✓ Համայնքապետարանից՝ փողոցների գիշերային լուսավորության աշխատանքները կազմակերպող և վերահսկող աշխատակիցների թիվը՝ 3 ✓ Առկա լուսավորության համակարգի երկարությունը՝ 17,5 կմ ✓ Առկա լուսավորության համակարգի հենասյուների թիվը՝ 850 ✓ Առկա դրոսեյների թիվը՝ 750		

		✓ Առկա մեկնարկիչների թիվը՝ 750			
Ոլորտ 5. Հողօգտագործում					
2020 թվականին հողօգտագործման բնագավառում նախատեսվում է ոռոգման ներտնտեսային 2.8 կմ ցանցի արդիականացում					
Ոլորտ 6. Տրանսպորտ					
Ոլորտային նպատակ Բարելավել ներհամայնքային ճանապարհների անցանելիության մակարդակը և ապահովել ճանապարհների մշտական անցանելիությունն ու տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ ✓ Բարեկարգ ներհամայնքային ճանապարհների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, 51% ✓ Հետիոտների և վարորդների բավարարվածության աստիճանը ներհամայնքային ճանապարհների վիճակից, 65%			
Ծրագիր 1. Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում, մայթերի կառուցում					
Ծրագրի նպատակ Բարելավել ներհամայնքային ճանապարհների անցանելիության մակարդակը և ապահովել ճանապարհների մշտական անցանելիությունն ու տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ ✓ Ներհամայնքային ճանապարհների անցանելիության և անվտանգ երթևեկության մակարդակը՝ բավարար	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2020թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
Միջանկյալ արդյունք 1 Ներհամայնքային ճանապարհները բարեկարգ և անցանելի են	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների երկարությունը, 1.2 կմ ✓ Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 2.3% ✓ Կառուցված մայթի երկարությունը՝ 750 քմ	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն

	✓ Ճանապարհների աղով և ավազով մշակման օրերի թիվը 45 ✓ Հետիոտների և վարորդների բավարարվածության աստիճանը ներհամայնքային ճանապարհների վիճակից, 90 % ✓ Աշխատանքների իրականացման ժամկետը, 1 տարի				
Միջոցառումներ 1. Մասիս համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքների իրականացում 2. Ճանապարհների փոսային նորոգման աշխատանքների իրականացում 3. Մայթի կառուցում 4. Ձյան ժամանակ ճանապարհների աղով ու ավազով մշակում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 8410,0հազար դրամ ✓ Ներբնակավայրային ճանապարհների բարեկարգման աշխատանքներում ներգրավված տեխնիկայի քանակը՝ 5 ✓ Տեղափոխվող հողի և խճի ծավալը՝ 2 տոննա ✓ Համայնքապետարանից միջբնակավայրային ճանապարհների բարեկարգման աշխատանքները կազմակերպող աշխատակիցների թիվը՝ 1			
Ոլորտ 7.Առևտուր և ծառայություններ					
2020 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում					
Ոլորտ 8. Կրթություն					
Ոլորտային նպատակ Ապահովել համայնքում կրթական ծառայությունների արդյունավետ մատուցումը		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ ✓ Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, 5% ✓ Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, 90% ✓ Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, 80% ✓ Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, 17%			
Ծրագիր 1. Նախադպրոցական և արտադպրոցական կրթության կազմակերպում					
Ծրագրի նպատակ Բարձրացնել նախադպրոցական կրթության և	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ	Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավար,		Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական

արտադարձական դաստիարակության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը	✓ Ծնողների կարծիքը մատուցվող նախադարձական կրթության ծառայության վերաբերյալ՝ գերազանց ✓ Ծնողների կարծիքը մատուցվող արտադարձական դաստիարակության ծառայության վերաբերյալ՝ լավ	ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	աշխատակազմի քարտուղար, ՆՈՒՀ-երի և արտադարձական ուսումնական հաստատությունների տնօրեններ	2020թ. հունվար-դեկտեմբեր	ռեսուրսների առկայություն
